ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԳՄՍ << ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ >> ՊՈԱԿ
ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ՝** ԻՆՏԵՐԱԿՏԻՎ <<Բանավեճ>> ՄԵԹՈԴԻ ՄԻՋՈՑՈՎ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

**ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ՝** ՎԱՐԴԵՆԻՍԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** ՀԱՍՄԻԿ ԲԵՅԲՈՒԹՅԱՆ

**ՈՒՍՈՒՑԻՉ՝** ՄԱՐԻԱՄ ԽԼՈՅԱՆ

**ԴՊՐՈՑ՝** ՄԵԾ ՄԱՍՐԻԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

2022 Թ.
Վարդենիս

# Բովանդակություն

1.Ներածություն.....3
2.Գրական ակնարկ.....6
3.Փորձարարական հետազոտություն.....11
3.1Խմբի նկարագիրը.....11
3.2Փորձարարական դասեր.....12
3.3Փորձարարական դաս 1.....12
3.4Փորձարարական դաս 2.....14
4.Վերլուծություն.....17
5.Գրականության ցանկ.....18
6.Հավելված.....19
1.Դասապլան-1.....19
2.Դասապլան-2.....20

## Ներածություն

Ինչպես ասել է Նելսոն Մանդելան՝<<Կրթությունը ամենահզոր զենքն է, որը դու կարող ես օգտագործել աշխարհը փոխելու համար>>: «Աշակերտի գլուխը ոչ թե անոթ է, որը պետք է «լցնել» գիտելիքներով, այլ «ջահ», որը պետք է «վառել»:Մանկավարժության մեջ կրթության նպատակը միշտ եղել է անփոփոխ՝ աճող սերունդը նախապատրաստել կյանքին և տվյալ ժամանակաշրջանի համար ձևավորել լիարժեք ու ակտիվ անդամներ: Սակայն պայմանավորված նոր հասարակական պահանջների ձևավավորմամբ, ժամանակ առ ժամանակ փոփոխվում են կրթության խնդիրները: Փորձը ցույց է տալիս, որ ուսուցման գործընթացը պետք է լինի այնպիսին, որ սովորողները դառնան վերջինիս ակտիվ մասնակիցներն ու հմուտ հետևորդները, որ պասիվ ունկնդրողից վերածվեն ակտիվ մասնակցի: Այդպիսով աշակերտները դառնում են անկաշկանդ ու ինքնուրույն, առաջանում է ուսման նկատմամբ մոտիվացիա, ինքնաբերաբար զարգանում է վերլուծական միտքը կամ, այսպես կոչված՝ քննադատական մտածողությունը: Սովորողների քննադատական մտածողության զարգացումը ժամանակակից մանկավարժության կողմից դիտարկվում է որպես արդի հասարակական պահանջ և կրթության կարևոր խնդիր: Քննադատական մտածողությունը մարդկային մտածողության մեջ իրականության արտացոլման ու վերարտադրման և վերլուծման գործընթաց է, որն ապահովում է ճշմարտության իմացում, գիտելիքների ձեռքբերում, ցանկացած կատարած աշխատանքում ստեղծագործական մոտեցում և իրավիճակի ու դեպքերի բազմակողմանի վերլուծության կարողություն ու հմտություն: Սկսած առաջին դասարանից գրեթե միշտ բախվում ենք աշակերտների քննադատական մտածողության զարգացմանը նպաստող ուղիներ գտնելու խնդրին: Կան մի շարք գործիքակազմեր՝ մեթոդներ, որոնց միայն տեղին ու ճիշտ կիրառումը կհանգեցնի ցանկալի վերջնարդյունքի: Իսկ թե հատկապես որ գործիքը պետք է կիրառել քննադատական մտածողության զարգացմանը նպաստելու համար կարող է ցույց տալ համապատասխան հետազոտական աշխատանքը: Ելնելով ուսուցման մեթոդների ընդհանուր փաթեթից պետք է նշեմ, որ դասավանդման պասիվ մեթոդները, որոնք առավել հաճախ անվանում ենք ուսուցչակենտրոն, չեն լուծում այն խնդիրները, որոնք կարող են ի հայտ գալ քննադատական մտածողությունը զարգացնելիս: Ժամանակի դինամիկային զուգընթաց առվել նպատակային եմ համարում ուսուցման ակտիվ և ինտերակտիվ մեթոդները, որոնցից առաջինը ուսուցման ոչ դյուրին գործում ենթադրում է ուսուցիչ-աշակերտ փոխադարձ երկխոսություն, իսկ երկրորդը, բացի նշվածից, պարտադիր ապահովում է եռաստիճան կապ. ուսուցիչ- աշակերտ-աշակերտ, որն էլ հանգեցնում է խնդրի առավել ծավալուն քննարկմանը, լուծումների որոնմանը:

**Նախագծված աշխատանքում իմ նպատակն է հետազոտությամբ պարզել.**

- Որքանո՞վ է ուսուցման ժամանակակից ինտերակտիվ՝ <<Բանավեճ>> մեթոդը նպաստում աշակերտների քննադատական մտածողության զարգացմանը:
- Որքանո՞վ են աշակերտները ներգրավվում Բանավեճի մեթոդով կառուցված ինտերակտիվ դասապրոցեսին:

• Արդյո՞ք իրատեսական է այդ մեթոդի կիրառումը որպես քննադատական մտածողության զարգացման գործիք:

***<u>ԻՄ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ՝</u>***

■ Ակտիվացնել դասավանդման ինտերակտիվ մեթոդների կիրառումը դասապրոցեսում:

■ Դիտարկել սովորողների քննադատական մտածողության դերն ու անհրաժեշտությունը տարրական դպրոցում:

■ Ուսումնասիրել Բանավեճ մեթոդի մեթոդաբանական հիմքերը և հիմնավորել

կիրառման հնարավորությունները կրտսեր դպրոցականների քննադատական մտածողության զարգացման գործում:

■ Հիմնավորել բանավեճ մեթոդը որպես ինտերակտիվ մանկավարժական մեթոդ, որը նպաստում է կրտսեր

դպրոցականների քննադատական մտածողության զարգացմանը:

■ Հետազոտությամբ հավաստել, որ բանավեճ մեթոդը կրտսեր դպրոցականների քննադատական մտածողության զարգացմանը նպաստող ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիա է և սահմանել դրա կիրառության արդյունավետ մանկավարժական պայմանները:

Հետազոտության խնդիրները լուծելու նպատակով ուսումնասիրություններ կատարելու ընթացքում կիրառվել են հետևյալ գիտահետազոտական մեթոդները.

■ վերլուծվել և ընդհանրացվել են մանկավարժական առաջավոր փորձի վերաբերյալ աշխատությունները

■ իրականացվել են զրույցի, դիտման մեթոդները

■ ուսումնասիրվել են սովորողների ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքները

■ անցկացվել է մանկավարժական փորձի մեթոդը

■ կիրառվել են հետազոտությունների արդյունքների վերլուծման մաթեմատիկական մեթոդները /արձանագրում, դիագրամի կազմում/:

## Գրական ակնարկ

Մեր օրերում հաճախ է շեշտվում այն ընդհանուր մոտեցումը, որ կրթության նպատակը միայն գիտելիքի տրամադրումը չէ: Այսօր կրթական համակարգն ունի առավել բարդ առաքելություն, այն է ձևավորել սերունդ, որն ունի ինքնուրույնություն քննադատաբար մտածելու շուրջ:

Ըստ ամերիկացի մանկավարժ Դ. Հալպերնի քննադատական մտածողությունը զարգացնելու նպատակով կարևոր է զարգացնել սովորողի հետևյալ հատկանիշները՝

1. Պատրաստակամություն.

2. Ճկունություն.

3. Հաստատակամություն

5. Գիտակցում.

6. Փոխզիջումային լուծումների որոնում

7.Բանավիճելունակություն

Ջոն Բարելը կարևորում է քննադատաբար մտածող մարդու հետևյալ հատկանիշները. այդպիսի մարդը՝

♦ կարողանում է լուծել խնդիրները,

♦ համառություն է ցուցաբերում խնդիրների լուծման հարցում,

♦ վերահսկում է իրեն, իր իմպուլսիվությունը

♦ բաց է այլ գաղափարների համար

♦ կարողանում է լուծել խնդիրները՝ համագործակցել

♦ կարողանում է լսել զրուցակցին

♦ դրսևորում է ապրումակցում

♦ հանդուրժող է

♦ կարողանում է խնդիրները դիտարկել տարբեր տեսանկյուններից,

♦ կարողանում է զուգորդական կապեր հաստատել երևույթների միջև

♦ հանդուրժող է իր տեսակետից տարբերվող տեսակետների նկատմամբ

♦ կարող է դիտարկել խնդրի լուծման մի քանի հնարավորություններ

♦ հաճախ տալիս է հարցը՝ «Ի՞նչ կլինի, եթե…»

♦ կարողանում է կառուցել տրամաբանական եզրակացություններ

♦ մտածում է իր զգացմունքների մասին, գնահատում է դրանք

Քննադատական մտածողության զարգացմանը նպաստող գրեթե բոլոր հետազոտությունները հիմնվում են Բենջամին Բլումի՝ 1956 թ. մշակած տաքսոնոմիայի վրա: Բլումի տաքսոնոմիայի ճանաչողական կամ, այսպես կոչված, իմացական խումբը բաղկացած է 6 մակարդակներից՝ գիտելիքի ձեռք բերում, ընկալում, կիրառում, վերլուծություն, սինթեզ և գնահատում




1. **Գիտելիքի ձեռք բերման մակարդակում** սովորողը կարող է հիշել, տարբերակել ուսուցման ընթացքում ներկայացված յուրահատուկ տեղեկատվությունը: Այն կարող է դրսևորվել փաստերի, կանոնների, ձայնի և այլնի միջոցով:

2. **Ընկալման մակարդակում** սովորողը կարող է ցույց տալ, որ հասկացել է տեղեկությունը՝ վերափոխելով այն տարբեր ձևերի, կամ ճանաչել դրա վերափոխված տարբերակը: Այն կարող է իրականացվել սովորողի կողմից բառերով բացատրության, ամփոփման, օրինակներով կամ այլ ձևերով:

3. **Կիրառման մակարդակում** սովորողը կարող է տեղեկատվությունը կիրառել՝ օգտագործելով կոնկրետ գործողության մեջ: Այդ գործողությունները կարող են լինել հաշվելը, գրելը, կարդալը, սարքավորումներ օգտագործելը և այլն:

4. **Չորրորդ մակարդակում, որը ենթադրում է վերլուծություն,** սովորողը կարող է ճանաչել տեղեկատվության հիմնական կառուցվածքը, տրոհել բաղկացուցիչ մասերը և որոշել դրանց միջև առկա կապերը: Սովորողը կարող է տարբերել փաստերը ենթադրություններից:

5. **Բլումի տաքսոնոմիայի հինգերորդ մակարդակը վերաբերում է սինթեզին:** Այս մակարդակում սովորողը կարող է տեղեկատվություն ստանալ տարբեր աղբյուրներից՝ իր

անհատական տեսակետը, դիրքորոշումը ձևավորելու նպատակով:

**Գնահատման մակարդակում** սովորողը կարող է որոշակի չափորոշիչներ կիրառել՝ օբյեկտի վերաբերյալ եզրահանգումներ անելու համար: Քննադատական մտածողության ձևավորման ու զարգացման տեսանկյունից պետք է շեշտել վերլուծության, սինթեզի և գնահատման մակարդակները: Բլումի տաքսոնոմիայի մակարդակները դասավորված են աճման կարգով, այսինքն՝ նախորդ մակարդակը հաջորդի հիմքն է, սակայն քննադատական մտածողության համար անհրաժեշտ են այն հմտությունները, որոնք ձևավորվում են վերջին երեք մակարդակներում: Եվ այսպես, կարելի է եզրահանգել. եթե անհատը ցանկանում է մասնակցել որևէ խնդրի քննարկմանը, ապա նրան անհրաժեշտ են համապատասխան գիտելիքներ խնդրի մասին և խնդրի ընկալում, որն էլ իր հերթին հիմք կծառայի քննադատական մտածողության հմտությունների զարգացմանհամար:

Չնայած այն համընդհանուր համաձայնությանը, թե որքան կարևոր է քննադատական մտածողությունը, վերջինիս միասնական սահմանում չկա: Ռոբերտ Յանգը նշում է, որ քննադատական մտածողությունը ենթադրում է իմացական հմտությունների և ռազմավարությունների կիրառում, որը կմեծացնի ցանկալի արդյունքին հասնելու հավանականությունը: Ըստ նրա քննադատական մտածողությունը նպատակասլաց, պատճառաբանված, նպատակի իրագործմանն ուղղված մտածողություն է: Յանգը նաև նշում է, որ խնդրիների լուծման, հիմնավորված ենթադրությունների կառուցման, հավանականությունների հաշվարկման և որոշումների կայացման հիմքում պետք է ընկած լինի քննադատական մտածողությունը: Ըստ նրա, այդպիսի մտածողություն ունեցող անհատները վերոնշյալ հմտություններն օգտագործում են գիտակցաբար, այսինքն նախապես գնահատում են այն արդյունքի ազդեցությունը, որը ձեռք կբերվի մտածելու գործընթացի ավարտին: Տարրական կրթության մասնագետ Սալի Գլենը նշում է, որ քննադատական մտածողությունը, որպես համակարգվածկատեգորիա ձևավորվել է բժշկության բնագավառում: Ըստ նրա բժշկությունը մի բնագավառ է, որտեղ ցանկացած որոշում կարող է ճակատագրական լինել մարդու կյանքի համար: Ուստի նախքան որոշում ընդունելն անհրաժեշտ է գնահատել այդ որոշման ճիշտ կամ սխալ լինելը և հնարավոր ազդեցությունը: Ըստ Գլենի քննադատական մտածողությունը դա փիլիսոփայական կողմնորոշում է դեպի մտածողություն, ինչպես նաև իմացական գործընթաց, որին հատուկ է պատճառաբանված լինելը: Ռոբերտ Էննիսը, ով հանդիսանում է քննադատական մտածողության առաջատար մասնագետներից մեկը, քննադատական մտածողությունը սահմանում է, որպես

«ողջամիտ>> մտածողություն, որը միտված է որոշելու ինչին հավատալ կամ ինչ անել»: Մեկ այլ աշխատության մեջ Էննիսը նշում է, որ քննադատաբար մտածելու նպատակն է գտնել ճշմարտությունը, կամ ճշմարտությանը ամենամոտ գտնվող պատասխանը: Լիզա Յուին իր հոդվածներից մեկում նշում է, որ այսօր կրթության բնագավառում գերակա խնդիր է այնպես կրթել աշակերտներին, որ նրանք ունենան բավարար անկախություն քննադատաբար մտածելու կյանքում հանդիպող տարբեր խնդիրների շուրջ: Յուին, իրականացնելով իր

հետազոտությունը Լոս Անջելեսի դպրոցներից մեկում պարզել է, որ գրագրության, միջառարկայական, պատմության, մաթեմատիկայի, օտար լեզուների, դասընթացները զգալիորեն կապված են աշակերտների քննադատական մտածողության զարգացման հետ: Ցուին իր հետազոտության արդյունքում գտել է, որ քննադատական մտածողության զարգացումը մեծապես կախված է նաև դասավանդման մեթոդներից: Գրեթե բոլոր ականավոր հեղինակները համակարծիք են, որ քննադատական մտածողության

ձևավորմանը միանշանակ նպաստում է դասավանդման ինտերակտիվ մեթոդների կիրառումը: Երբ սովորողն ակտիվորեն մասնակցում է ուսումնառության գործընթացին, նա ակամա սկսում է մտածել խնդրի շուրջ, ուսուցչից բացի լսում է իր դասընկերների կարծիքը և տալիս է իր պատճառաբանված համաձայնությունը կամ անհամաձայնությունը բարձրաձայնված կարծիքների վերաբերյալ: Գարիսոնը խիստ կարևորում է ուսուցչի դերը քննադատական մտածողության զարգացման գործում: Նա նշում է, որ ուսուցիչը պարտավոր է սովորողին քննարկումների միջոցով դրդել վիճարկելու տարբեր գաղափարներ, ենթադրություններ, տեսություններ, նորմեր և կանոններ, քանի որ քննադատական մտածողությունը սովորողից պահանջում է ստաձնել գաղափարներ ու խնդիրներ քննելու և հետևություններ անելու պատասխանատվություն: Ուստի պատահական չէ, որ շատ գիտնականներ պնդում են, որ ուսուցչի և աշակերտի միջև երկխոսության, բանավեճի և քննարկման ծավալումը քննադատական մտածողության ձևավորման և զարգացման թիվ մեկ գրավականն է: Կրթության մասնագետ Սիեգելը հավաստիացնում է, որ դասավանդողի հիմնական դերը կայանում է քննադատաբար մտածողի օրինակ ծառայելու մեջ: Այսինքն դասավանդողն առաջինը ինքը պետք է պատրաստ լինի վիճարկելու սեփական արժեքներն ու գաղափարները և դրանով իսկ օրինակ ծառայի իր աշակերտների առջև: Կարելի է պնդել նաև այն, որ քննադատական մտածողության համար անհրաժեշտ հմտությունները հնարավոր չէ կիրառել առանց խնդրո առարկայի վերաբերյալ նախնական գիտելիքի: Ուստի քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումը պետք է լինի և՛ առարկայական ծրագրի, և՛ ուսումնական պլանի զարգացմանհիմքում:

## 3.Փորձարարական հետազոտություն

### 3.1Խմբինկարագիրը

Ինչպես գիտենք՝ ինտերակտիվ ուսուցումը դա երկխոսությամբ ուսուցում է, որի ընթացքում սովորողները համագործակցում են ոչ միայն ուսուցչի, այլև միմյանց հետ: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ նոր գիտելիքներ փնտրելու հանձնարարություններով սովորողներին ուղղորդում եմ անկախ որոնողական աշխատանքների: Իմ գործառույթներն են՝

1. Բացատրել սպասվելիք աշխատանքի նպատակը:

2.Դասի սկզբում հայտարարել թեման և քննարկվող հարցերը:

3. Բաժանել աշակերտներին խմբերի և տալ հանձնարարություններ:

4. Չթողնել առանց ուշադրության սխալ մեկնաբանությունները, սակայն միևնույն ժամանակ միանգամից չտալ ճիշտ պատասխանը:

5. Հետևել, որ քննադատվի միտքը, կարծիքը, այլ ոչ թե միտքը արտահայտող սովորողը:

6. Օգնել աշակերտներին գալ ընդհանուր եզրահանգման և դասի վերջում անել եզրակացություններ, որոնք ունեն ընդհանուր նշանակություն: Իմ դերը աշակերտի ինքնուրույն աշխատանքի կազմակերպումն է: Հայտնի է, որ նոր բան սովորելիս մարդը թույլ է տալիս սխալներ և իմ խնդիրը կայանում է նրանում, որ սովորողը ուսումնական պրոցեսում կատարված սխալները ուսումնասիրի և վերլուծի: Ինտերակտիվ մեթոդները կիրառելիս, դադարում եմ լինել տեղեկատվության հիմնական տեղեկատու, միայն կարգավորում կազմակերպում եմ գործընթացը, տալիս խորհրդատվություն:

Կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկություններից ելնելով' քննադատական մտածողության զարգացման նպատակով ինտերակտիվ
<<Բանավեճ>> մեթոդի կիրառումը տարրական դպրոցում կրում է որոշակի փոփոխություններ' պարզեցումներ, շտկումներ և մշակումներ: Տարրական դպրոցում Ինտերակտիվ <<Բանավեճ>> մեթոդի կիրառումը կլինի արդյունավետ մի շարք մանկավարժական պայմանների առկայությանդեպքում.

- բարենպաստ և զարգացնող կրթական միջավայրի ապահովում,
- սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառում,
- ուսուցման գործընթացի միջոցների,մեթոդների,ընթացակարգի ճիշտ ընտրություն,

- ուսումնական գործունեության բազմազան տեսակների կիրառում,
- ուսման դրական ու ներքին դրդապատճառների ձևավորում,
- դասարանում դրական հոգեբանական մթնոլորտի ապահովում,
- ուսուցչի մասնագիտական պատրաստվածության առկայություն:

Քննադատական մտածողությունը զարգացնելու նպատակով <<Բանավեճ>> մեթոդի կիրառման արդյունավետությունը մեծապես կախված է նաև ուսուցչի վարպետությունից: Տարրական դպրոցի ուսուցիչը պետք է լիարժեք տիրապետի տվյալ մեթոդին, կարողանա վերջինս տեղին ու ժամանակին կիրառել՝ աշխատանքը դարձնելով ոչ միայն արդյունավետ, այլ նաև ամեն մի երեխայի համար հաճելի, ընդունելի ու կարևոր՝ նպաստելով սովորողների քննադատական մտածողության զարգացմանը:
Նախագծված հետազոտական աշխատանքը իրագործելու նպատակով ընտրել եմ որպես փորձարարական դասարան Մեծ Մասրիկի միջնակարգ դպրոցի 4-րդ դասարանը:

- Հետազոտվող դասարանում աշակերտների թիվն էր՝ 26 աշակերտ:
- Աշակերտներն ունեին առաջադիմության ու զարգացման մոտավորապես միևնույն մակարդակը:
- Հետազոտելի դասարանում ուսուցումն իրականացրել եմ Բանավեճ մեթոդի կիրառմամբ:
- Հետազոտության շրջանակներում փորձարարական դասարանում ընտրվել են մայրենի 4-րդ դասագրքի երկու թեմաներ: Գիտափորձի իրականացման համար կիրառման մեջ են դրվել իմ կողմից նախապես մշակված դասերի պլանները:
- Հետազոտության համար հիմք է ընդունվել « Հանրակրթության պետական չափորոշիչը:
- Հետազոտվող դասարաններում մանկավարժական հետազոտության արդյունքները չափվել են իմ կողմից մշակված հարցաշար-քարտերի վերլուծության հիման վրա: Գիտափորձի վերջնական արդյունքները համապատասխանաբար ներկայացվել են աղյուսակներով և գծապատկերներով:

Կրտսեր դպրոցի հետազոտելի 4-րդ դասարանում, ուր նպատակ եմ հետապնդում զարգացնել քննադատական մտածողությունը կիրառեցի սույն աշխատանքում առաջադրված ինտերակտիվ Բանավեճ մեթոդը՝ որպես ռազմավարական գործիք:

Սովորաբար նոր թեմա ընտրելիս կապ եմ հաստատում սովորողների ունեցած գիտելիքների ու պատկերացումների և ուսուցանվող նոր նյութի միջև: Երբեմն սովորողները իրենք են ընտրում բանավեճի թեման, առաջարկելով նրանց բերել

համապատասխան նյութեր: Երբեմն բանավեճը սկսելուց առաջ դիտում ենք ֆիլմեր կամ նկարներ, տալիս եմ նրանց օգնող բառեր և արտահայտություններ, որոնք կօգնեն բանավեճը ավելի արդյունավետ անցկացնել և վարել ավելի հետաքրքիր:

**Ինչպե՞ս եմ ստեղծում բանավեճային մթնոլորտ**

Դասի սկզբնական փուլում առաջադրանքները ձևակերպում եմ մտածելու հրավիրող նախադասություններով, որոնք թույլ են տալիս սովորողին զարգացնել ստեղծագործական մտածողությունը, մտքերը ազատ արտահայտելու հմտությունը զարգացնել, սովորողներին դրդում եմ առաջադրել վարկածներ և նրանց մղում է հակասությունների քննարկմանը բանավեճի մեջ: Բանավեճն ընդհանրապես պետք է անցկացվի բարյացակամության և յուրաքանչյուրի նկատմամբ ուշադրության մթնոլորտում: Նույնիսկ սխալի դեպքում չպետք է բարձրաձայն դիտողություն անել: Այդ դեպքում լուռ մոտենում եմ մուտքագրող-բանավիճող սովորողին և ուղղում քերականական սխալը:

**Բանավեճի ամփոփումը**

Ամփոփումը կատարվում է սովորողների հրաշք տետրերում՝ գրելով և մեկնաբանելով, թե ինչ է տեղի ունեցել և ինչ պատճառով՝ արտահայտելով սեփական կարծիքն ու գնահատականը: Այս փուլում զարգացնում եմ գրելու կարողության հմտությունը: Սովորողի հրաշք տետրը կարող է նաև լինել տնային աշխատանքի և քննարկումների կատարման միջավայր:

## 3.2 Փորձարական դասեր

**Փորձարարական դաս-1**

Մեթոդը կիրառելու նպատակով Մեծ Մասրիկի միջնակարգ դպրոցի 4-րդ դասարանում իրականացրեցի երկու փորձարարական դաս Մայրենի առարկայից հետևյալ թեմաներով՝ «Այրի կինն ու որդին»» և «Արջն ու օձը» առակները Մայրենի 4-րդ դասագիրք, հեղ.՝ Վաչագան Սարգսյան: Սույն թեմաններում առկա խնդրահարույց իրավիճակները հնարավորություն ընձեռեցին դասապրոցեսին ստեղծել բանավեճի մթնոլորտ, հանդես գալ սեփական տեսակետներով, քննարկել դրանք տարբեր անկյուններից և, ունենալով քննարկման ենթարկված բազմակարծություն, առաջադրել որոշակի լուծումներ և գալ եզրահանգման՝ զարգացնելով քննադատական մտածողությունը: Փորձարարական դասաժամին ներկա էին դասարանի բոլոր աշակերտները՝ թվով 26: Աշակերտներն ունեին առաջադիմության և զարգացվածության տարբեր մակարդակներ: Առաջին հետազոտական դասը իրականացվեց <<Այրի կինն ու որդին>> բնագրի ուսումնասիրության շուրջ: Համաձայն դասապլանի առաջադրվեց հարց՝ **<u>ի՞նչ է ազնվությունը, ի՞նչ է խարդախությունը և արդյո՞ք հնարավոր է, անկախ հանգամանքներից, միշտ ազնիվ լինել:</u>** Առաջադրված հարցերի քննարկմանը նախ մասնակցեցին աշակերտներից 4-ը՝ տալով հետևյալ պատասխանները.

1. Ազնվությունը մարդկային դրական գիծ է, որը դաստիարակում են մեր ծնողները
2. Ազնվությունը լավ հատկանիշ է, բայց ոչ միշտ է հնարավոր ազնիվ լինել
3. Ազնիվ է այն մարդը, ով չի ստում անկախ հանգամանքներց

4-րդ աշակերտը հարցին տվեց շատ անսպասելի պատասխան ասելով՝ ազնիվ ու արդար մարդիկ մեր օրերում տեղ չունեն, փոխարենը հաճախ խարդախներն են հասնում հաջողությունների:

Վերջին հնչեցրած պատասխանը դարձավ բանավեճի քննարկման բուռն առիթ: Բանավեճին աստիճանաբար միացան ևս երեք աշակերտ՝ արտահայտեցին իրենց տեսակետները՝ հիմնավորելով օրինակներով: Ստեղծված իրավիճակում, երբ առկա էր առողջ քննադատական մթնոլորտ, առաջարկեցի բաժանվել խմբերի և լուռ ընթերցել <<Այրի կինն ու որդին>> առակը, հետևյալ տողերից առակի համար ընտրել առավել համապատասխանը՝ հիմնավորելով ընտրությունն ու բերել դրան համարժեք վկայություններ ու փաստեր:

1. Աշխատասիրության գովերգում, քանի որ...
2. Բարության գովերգում, քանի որ...
3. Խարդախության քննադատում, քանի որ...

Առակը ընթերցելուց հետո իրենց տեսակետները արտահայտելու պատրաստակամություն հայտնեցին ինչպես դասի սկզբնական փուլում

ակտիվություն դրսևորած աշակերտները, այնպես էլ նոր՝ թվով 7 աշակերտ: Վերջիններից մեկը, ով ընտրել էր աշխատասիրության գովերգումը տողը, հիմնավորեց իր ընտրությունը՝ պնդելով որ այրի կինը այծ էր պահում և կթում, իսկ որդին ամեն օր արածացնում էր այծերին, պատահարն էլ ներկայցրեց որպես բնության աղետ: Այս տեսակետը արժանացավ առողջ քննադատության և բանավեճի: Մասնակից մեկ այլ աշակերտ նշեց, որ իր համար ընդունել է բարության գովերգումը, քանի որ այրի կինը հարևաններին կաթ էր տալիս: Առաջադրված տեսակետին համակարծիք եղան նոր թվով 4 աշակերտներ: Այս տեսակետի հիմքերը թույլ համարեցին մինչ այդ լուռ հետևող թվով 3 աշակերտներ՝ արտահայտելով նոր կարծիքներ և քննադատորեն մոտենալով առակի հերոսի քայլին: Նրանք ընտրեցին առաջադրված տարբերակներից երրորդը՝ խարդախության քննադատումը, քանի որ թվացյալ բարություն ցուցաբերող կինը ջուր էր խառնում կաթին: Խմբերի միջև ծավալվեց անկաշկանդ բանավեճ, որն էլ իր հերթին նպաստում էր քննադատական մտածողության զարգացմանը:

Բանավեճ մեթոդի կիրառումը առավել ակնառու դարձնելու նպատակով առաջարկեցի ևս մեկ անգամ, արդեն բարձրաձայն, միմյանց շարունակելով կարդալ բնագիրը՝ ուշադրություն դարձնելով գրատախտակին գրված հարցադրումներին:

Հարցեր՝

1. Ինչպես կմեկնաբանես այրի կնոջ բացատրությունը որդուն:
2. Ինչու որդին շուտ տուն եկավ և ինչ պարզաբանում տվեց մորը:
3. Ինչ կցանականաս ասել այրի կնոջը, եթե հանդիպես
4. Քո կարծիքով արդյոք մի շերեփ ջուրն էր հեղեղ դարձել, թե...

Բանավեճին մասնակից դարձան դասարանի ևս 3 աշակերտ գրեթե բոլոր աշակերտները, բացառությամբ չորսի: Նրանց մոտ Դրսևորվեց առավել պասիվություն, կար կաշկանդվածություն: Վերլուծելու կարողությունները թույլ էին: Աշակերտները ազատ արտահայտում էին իրենց տեսակետները, ցանկացած կարծիք ընդունելի էր, վիճելի պատասխանները հիմնավորվում էին և հնչեցվում հակափաստարկներ:

Դասի ավարտին՝ կշռադատման փուլում իմ կողմից խմբերին ներկայացրեցի հանձնարարություն. տրված բառերի համապատասխան դասավորությամբ ստանալ առածներ՝ մեկնաբանելով վերջիններիս միտքը:

Ազնիվ մարդու հացը չիկտրվի:

Անազնիվ վաստակը հեղեղը կտանի:

Ներկայացված աշխատանքին մասնակցեցին նախորդ չորսից ևս 2-ը: Արդյունքում ունեցա

հետևյալ պատկերը:




**Փորձարարական դաս-2**

Փորձարարական երկրորդ դասաժամին <<Բանավեճ>> մեթոդով քննադատական միտքը զարգացնելու նպատակով ընտրեցի <<Առյուծն ու մուկը>> առակը: Դասի միջանկյալ հատվածում՝ իմաստի ընկալման փուլում բանավեճի առիթ հանդիսացան նախապես բաժանված խմբերին հղված հարցադրումները:

Արդյո՞ք մեղավոր էր օձը: Չէ՞ որ բնությամբ է նրան տրված սողքը: Կարո՞ղ

ենք ասել, որ արջը ընկերություն անել չգիտեր:

Ի՞նչ եք կարծում ովքեր կարող են ընկերություն անել:

Արդյո՞ք ընկերություն անելու համար պետք է նման բնավորություններ ունենալ: Ինչու՞

չստացվեց արջի և օձի ընկերությունը:

Այս հարցադրումները հիմք հանդիսացան խմբերի միջև ծավալված բանավեճի:

Ի տարբերություն նախորդ փորձարարական դասի՝ այս անգամ բանավեճի սկզբնական

փուլում մասնակցեցին թվով 9 աշակերտ, որոնցից երեքը մի խմբից էին, իսկ չորսը մյուս: Երկրորդ հարցի շուրջ բանավիճեցին ևս 3 աշակերտ: Մյուսները ակտիվ հետևորդներ էին և հաճախ հուշումներ էին անում ընկերներին: Հնչում էին ստեղծագործաբար արտահայտված մտքեր, աշակերտները կատարում էին հետաքրքիր վերլուծություններ: Արդյո՞ք ընկերություն անելու համար պետք է նման բնավորություններ ունենալ հարցի քննարկմանը ավելացավ աշակերտների թիվը, որոնք անկաշկանդ ներկայացնում էին իրենց տեսակետները, անում առողջ դատողություններ: Նման կարծիքներից էր՝ <<Ոչ կարծում եմ ընկերները կարող են նման բնավորություններ նաև չունենալ, քանի որ դա կարող է ձանձրալի լինել,

ընկերներից մեկը պարտադիր պետք է ակտիվ լինի>>: Կար նաև հետևյալ կարծիքը՝
<<Եթե ընտրում ես ընկեր, նա պետք է քեզ նման լինի, որպեսզի տարաձայնություններ չլինեն: Այդպես ավելի հեշտ է, և դրա վառ ապացույցը հենց մեր դասն է>>:

Դասի կշռադատման փուլում Բանավեճ մեթոդի կիրառման համար հիմք ծառայեցին հետևյալ հարցերը

- Երբ ցանկանաս կարող ես հրաժարվել ընկերոջից:
- Ում հետ ուզես, կարող ես ընկերանալ:

Բանավեճի այս փուլում նախորդ մասնակից աշակերտների թիվը ավելացավ ևս 6- ով: Աշակերտները դեմ և կողմ կարծիքներ էին հնչեցնում, հիմնավորում փաստերով և անգամ սեփական օրինակներիմիջոցով:

Ընկերոջիցհրաժարվելուհամարպետքէլինիլուրջևհիմնավորպատճառ:

Ընկերությունը սրբություն է, ոչ մի դեպքում ընկերոջից հրաժարվել չի կարելի: Որպեսզի

անակնկալի չգանք, պետք է իմանալ թե ում ես ընկեր ընտրում;

Ում հետ ուզես չես կարող ընկերանալ, ընկերը պետք է սրտակից մեկը լինի, ունենա մարդկային լավ հատկանիշեր:

Եթե անգամ ընկերը սխալ քայլ է արել, պետք է նրան օգնել, թույլ չտալ ավելի խորացնել սխալները:

Մարդիկ բնավորությամբ տարբեր են լինում, ուստի ամեն մեկին մեզ ընկեր ընտրել չենք կարող:

Այս հնչած պատասխանների ժամանակ էլ ավելացան մասնակից աշակերտների թիվը, ովքեր ներկայացրեցին իրենց համոզմունքները: Նրանց թիվը կազմեց +5 աշակերտ:

Համեմատաբար լուռ էին նախորդ փորձարարական դասի պասիվ աշակերտները, որոնք

խուսափում էին իրենց դիրքորոշումն ու ազատ կարծիքը արտահայտելուց: Նրանց թիվը 3 էր:

Այսպիսով 2-րդ հետազոտության արդյունքների վերլուծության հիման վրա, ստացվեց հետևյալ դիագրամը:




***<u>Արդյունքում</u>***

Պահպանվեցին Բավեճի ընթացքում սկզբունքային մոտեցումները

1. Բոլոր մասնակիցները հավասար էին
2. Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունեցավ իր կարծիքը ներկայացնել ցանկացած հարցի վերաբերյալ
3. Աշխատանքի մեջ ներգրավվեցին բոլորը
4. Ոչ մի սովորող չի քննադատվում

Խրախուսվեցին այն աշակերտները, որոնք ազատ և անկաշկանդ էին մտածում: Փորձարարական և առաջին և երկրորդ դասից գնահատվեցին 5-6 աշակերտ: Գնահատականները հիմնավորվեցին:

## Վերլուծություն

Հետազոտությունը թույլ է տալիս հանգել հետևյալ եզրակացության, որ ուսուցման ինտերակտիվ մեթոդը նպաստում է ոչ միայն ուսման արդյունավետության բարձրացմանը, այլև զարգացնում է քննադատական մտածողությունը, գիտելիքները դարձնում է կիրառելի և նպաստում ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանն ու հարստացմանը:

Բանավեճ մեթոդի շնորհիվ աշակերտները՝

___Կարողանում են կատարել ուսումնական ստեղծագործական աշխատանք:

___Կարողանում են գտնել լիրենց ստացած գիտելիքներին և իրենց անձնական կենսափորձի միջև եղած փոխադարձ կապը, որպեսզի գիտելիքը գործնական կիրառություն գտնի:

___Դառնում են քննող դատողություններ և վերլուծություններ կատարող, առաջադրում են խնդրի վերաբերյալ լուծումներ: Դասարանում գլխավոր դերակատարողը դառնում է աշակերտը, գերակայում է աշակերտակենտրոն ուսուցումը:

___Աշակերտները կարողանում են որոշել, թե զանազան տեղեկություններն ինչպես են առնչվում միմյանց հետ:

___Կարողանում են նոր տվյալները, նոր գաղափարները տեղադրել իրենց ունեցած գիտելիքների համակարգում:

___Կարողանում են քննադատաբար, ստեղծագործաբար և արդյունավետ կերպով իմաստավորել ցանկացած տեղեկություն:

Այսպիսով՝

1. Հասարակական բուռն զարգացումները, ժամանակակից կրթական բարեփոխումները կյանքի են կոչել նոր՝ տնտեսական, գիտական, մշակութային և այլ պահանջներ, որոնք էլ պայմանավորել են մանկավարժական գործընթացի արմատական փոփոխությունները՝ ուսուցիչ աշակերտ հարաբերությունների վերանայում, դասավանդման նոր մեթոդների և ձևերի, մանկավարժական նոր տեխնոլոգիաների որոնում ու կիրառում և այլն: Ժամանակակից ուսուցման գործընթացում կրթության հիմնախնդիրների շարքում իր կարևոր տեղն ունի սովորողների քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումը, որն այսօր դիտարկվում է որպես հասարակական պահանջ և կրթության արդի խնդիր:

1. Տեսական և փորձարարական աշխատանքների արդյունքում պարզ դարձավ, որ ինտերակտիվ Բանավեճ մեթոդը կարող է արդյունավետ կերպով կիրառվել ժամանակակից տարրական դպրոցի ուսուցման գործընթացում որպես քննադատական մտածողությունը զարգացնող միջոց:

4. Փորձարարական հետազոտության արդյունքները վկայում են, որ Բանավեճ մեթոդը

կարող է արդյունավետ կիրառվել տարրական դպրոցում և նպաստել կրտսեր դպրոցականների քննադատական մտածողության ձևավորմանն ու զարգացմանը մանկավարժական հետևյալ պայմանների դեպքում, բարենպաստ և զարգացնող կրթական միջավայրի ապահովում, սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառում, ուսուցման գործընթացի միջոցների, մեթոդների, ընթացակարգի ճիշտ ընտրություն, ուսումնական գործունեության բազմազան տեսակների կիրառում, ուսման դրական ու ներքին դրդապատճառների ձևավորում, դասարանում դրական հոգեբանական մթնոլորտի ապահովում, ուսուցչի մասնագիտական պատրաստվածության առկայություն: Տարրական դպրոցում քննադատական մտածողության տեխնոլոգիայի մեթոդների ընտրությունն անմիջականորեն կապված է ուսուցանվող նյութի բովանդակության, բարդության և ծավալի հետ:

Փորձարարական աշխատանքների արդյունքները փաստում են, որ Բանավեճի մեթոդը նպաստում է ոչ միայն սովորողների քննադատական ձևավորմանն ու զարգացմանը, այլ նաև « Հանրակրթության պետական չափորոշչի մյուս բաղադրիչների՝ գիտելիքների համակարգի, հաղորդակցական, համագործակցային, ստեղծագործական, ինքնուրույն գործունեության կարողությունների ու հմտությունների և սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը:

## Գրականության ցանկ


1. Գիտամեթոդական հանդես նախաշավիղ 2. 2001, 2. 2006, 5-6. 2004
2. Խաչատրյան Ս. Գ. , Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը տարրական դասարաններում, Գ. 2006.
3. Քննադատական մտածողության տեսության զարգացումը կրտսեր դպրոցում, Ծրագրեր և նյութեր, Երևան-2002
4. Անափիոսյան, Քննադատական մտածողություն ձևավորող կրթությունը որպես կանխակալ մտածողության արդյունքում ծագած հակասությունների կարգավորման գրավական, Ուսումնասիրություն ԲՀԻ Օժանդակության հիմնադրամի ծրագրերի շրջանակներում, 2012, 63 էջ:
5. Ն. Վարդումյան, Ա. Սարգսյան, Լ. Սրուցենկո, Ռ. Պետրոսյան, Գ. Հարությունյան, Ն. Մարկոսյան, Ֆ. Երիցյան, Գ. Սիմոնյան, Ի. Եղիկյան, Նոր մոտեցումներ ուսուցիչների պատրաստման գործընթացին, Գործիմաց մոտեցում, Տեսություն և պրակտիկա, ձեռնարկ ուսուցիչների պատրստման համար, ԱՅՈԵՔՍ, Եր., 2004, - 196 էջ:
6. С. И. Заир-бек, И. В. Муштавинская Развитие критического мышления на уроке: Пособие для учителя. М., “Просвещение”, 2011. – 223 с. 4. И. В. Муштавинская, Технология развития критического мышления на уроке и в системе подготовки учителя, Уроки для педагогов, Учебно-методиич. пособие, изд. Каро, Санкт-Петербург, 2009, 24 с.
7. Հարությունյան Գ .Ն ., «Քննադատական մտածողության տեխնոլոգիան ուղղված մանկավարժական գործընթացի արդյունավետության բարձրացմանը», «Մանկավարժություն», /Գիտամեթոդական վերլուծական ամսագիր/, N6, 2012թ., էջ 28-33:

Հարությունյան Գ.Ն., «Տարրական դպրոցի ուսուցիչը և նրա աշխատանքը սովորողների քննադատական մտածողության զարգացման ուղղությամբ», ժողովածու Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի, Նոր ուսուցիչ նոր դպրոցի համար, Մանկավարժական կրթության բարեփոխման հեռանկարներ. Տեսություն և պրակտիկա: Գիտաժողով /2012թ. դեկտեմբերի 14/, I

պրակ, Երևան, «Մանկավարժ», 2013 թ., էջ434

**Հավելված**

Հավելված 1

Դասապլան

ՈՒսուցիչ՝ Խլոյան Մարիամ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Առարկա | մայրենի | Ամսաթիվ | 12.09.2022թ. | Կիսամյակ | I | դասարան | 4 |
| Թեմա | <<Այրի կինն ու որդին >> առակը | | | | | | |
| Օգտագործվող նյութեր | Հարցեր պարունակող քարտեր, դասագիրք | | | | | | |
| Դասի նպատակը՝ | 1. Զարգացնել վերլուծելու, մտքերը ազատ արտահայտելու կարողությունները<br>2. Կիրառելով Բանավեճ մեթոդը նպաստել քննադատական մտածողության զարգացմանը | | | | | | |
| Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ դասը տեղի է ունեցել | | | | | | | |
| Վերջնարդյունքներ | Աշակերտը կկարողանա<br>Նկարագրել<br>Թվարկել<br>Համեմատել<br>Վերլուծել | | | | | | |
| Գործունեությունն Եր / ժամ/տևողություն/ | ՈՒսումնական գործունեություն աշակերտներ | | ՈՒսումնական գործունեություն ուսուցիչներ | | Հարցադրումներ | | Կիրառվող մեթոդներ |
| Դաս 45 ր<br>5ր տնային ստուգում<br>Դասի հարցում՝ 15<br>20ր նոր նյութի հանձնարարում<br>5ր ամփոփում, տնային հանձնարարութ-յուն | Բացեն դասագրքերը, Պատրաստվեն դասին; Ներկայացնել տնային աշխատանքները:<br><br>Պատասխանեն հարցերին, քերականական աշխատանք կատարելու համար դասից դուրս գրեն բառեր, կատարեն բառային աշխատանք,դուրս դրեն ուղղագրական արժեք ներկայացնող բառերը | | Ողջունում է դասարանին Զրույցի կազմակերպում հարցերի շուրջ :<br>Ստուգում է տնային աշխատանքները. .<br>Հիշեցնում է դասի թեման Բացատրում է անհասկանալի մասերը. Բանավեճ ծավալում և քննարկում, քննատատական մտքի զարգացում<br>Հանձնարարում է միմյանց շարունակելով կարդալ դասը.<br>. բացատրում է միտքը, նոր, անծանոթ բառերը, | | ի՞նչ է ազնվությունը, ի՞նչ է խարդախությունը, արդյո՞ք հնարավոր է միշտ ազնիվ լինել,անկախ հանգամանքներից | | Ինտերակտիվ <<Բանավեճ >> մեթոդը |
| Տնային աշխատանք | Կարդալ, վերլուծել և ներկայացնել առակի հերոսներին և նրանց արարքները | | | | | | |

Մեթոդմիավորման նախագահ՝ ----------Ք.Հովհաննիսյան----------

Փոխտնօրեն՝ ----------Ա.Գասպարյան----------

Հավելված 2

Դասապլան

ՈՒսուցիչ՝ Խլոյան Մարիամ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Առարկա | մայրենի | Ամսաթիվ | 14.09.2022թ. | Կիսամյակ | I | դասարան | 4 |
| Թեմա | <<Արջն ու օձը>> առակը | | | | | | |
| Օգտագործվող նյութեր | Հարցեր պարունակող քարտեր, դասագիրք | | | | | | |
| Դասի նպատակը՝ | Զարգացնել վերլուծելու, մտքերը ազատ արտահայտելու կարողությունները<br>Նպաստել քննադատական մտածողության զարգացմանը | | | | | | |
| | | | | | | | |
| Վերջնարդյունքներ | Աշակերտը կկարողանա<br>Նկարագրել<br>Թվարկել<br>Համեմատել<br>Վերլուծել<br>Բանավիճել | | | | | | |

| Գործունեությունը / ժամ/տևողություն/ | ՈՒսոյմնական գործունեություն աշակերտներ | ՈՒսումնական գործունեություն ուսուցիչներ | Հարցադրումներ | Կիրառվող մեթոդներ |
|---|---|---|---|---|
| Սկիզբ՝ 5 ր<br><br>Ընթացք՝ 15ր<br><br>Առաջադրանք-ների կատարում՝20ր<br><br>5ր ավարտ | Բացեն դասագրքերը, Պատրաստվեն նոր դասին;<br>Ներկայացնել տնային աշխատանքները:<br><br>Պատասխանում են հարցերին, կատարում են վերլուծություններ: Դասից դուրս են գրում գրությամբ և արտասանությամբ տարբերվող բառերը և ենթարկում վերլուծության | Ողջունում է դասարանին,<br>.Հիշեցնում է դասի թեման.<br>.Ստուգում է տնային աշխատանքները.<br>Բանավեճ ծավալում և քննարկում, քննատատական մտքի զարգացում<br>.Բացատրում է անհասկանալի մասերը.<br>Հարցերի միջոցով աշակերտներին ներգրավում է դասապրոցեսի մեջ.<br>. Հանձնարարում է միմյանց շարունակելով կարդալ դասը.<br>. Ամփոփում է դասը, հանձնարարում տնային աշխատանք : | Ի՞նչ է կասկածամտությունը, ի՞նչ է խարդախությունը, ի՞նչ է ընկերությունը, և արդյո՞ք հնարավոր է, անկախ հանգամանքներից, պահպանել ընկերությունը: | Ինտերակտիվ <<Բանավեճ>> մեթոդը |
| Տնային աշխատանք | Կարդալ, վերլուծել և ներկայացնել առակի հերոսներին և նրանց արարքները : | | | |

Մեթոդմիավորման նախագահ՝ ----------Ք.Հովհաննիսյան

Փոխտնօրեն՝ ----------Ա.Գասպարյան